Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Ուսումնական սեմինար 2. Հայաստանում ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) գործնական կիրառման վերաբերյալ

Ի՞նչ պետք է հաշվի առնեն պլանավորման մարմինները ՌԷԳ-ի իրականացման համար տեխնիկական առաջադրանք կազմելիս. գործնական նկատառումներ

23 - 24 նոյեմբերի 2023 թ.
Հայաստանի Հանրապետություն, Երևան

Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու
ՄԱԿ ԵՏՀ-ի խորհրդատու

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Մոտեցումներ, թե ով է իրականացնելու ՌԷԳ-ը (1)

Երեք հիմնական մոտեցում.

1) **ՌԷԳ-ն իրականացվում է Պատվիրատուի հաստիքային աշխատողների-մասնագետների կողմից.**
   ա. պլանավորողների ուժերով
   բ. պլանավորման գործընթացին չմասնակցող մի քանի գերատեսչությունների ուժերով
   գ. երկու ընտրանքները միասին

2) **ՌԷԳ-ն իրականացվում է ներգրավված խորհրդատուների** (փորձագետների) ուժերով, ներառյալ ՌԷԳ-ի շրջանակի սահմանման մասին հաշվետվության և ՌԷԳ-ի հաշվետվության պատրաստումը, ՌԷԳ-ի հետ կապված աշխատանքների համակարգումը, խորհրդակցությունների կազմակերպումն ու անցկացումը և այլն,

3) **ՌԷԳ-ի հետ կապված աշխատանքները համակարգում է Պատվիրատուն,** ընդ որում.

- **Պատվիրատուի հաստիքային աշխատողները-մասնագետները կատարում են աշխատանքների մի մասը եւ պատրաստում** ՌԷԳ-ի շրջանակի սահմանման մասին հաշվետվության և ՌԷԳ-ի հաշվետվության **առանձին բաժինները,** օրինակ՝ առկա իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրում և ելակետային պայմանների վերլուծություն,
- **ՌԷԳ-ում ներգրավված խորհրդատուները (փորձագետները) կատարում են սեփական գնահատումը ու տալիս դրա եզրակացությունները,** օրինակ՝ օդի որակի հնարավոր հետևանքների վերլուծություն, ՌԷԳ-ի վերաբերյալ հաշվետվությունների հավաքում և այլն:

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Մոտեցումներ, թե ով է իրականացնելու ՌԷԳ-ը(2)

	Առավելությունները	*Թերությունները*
Սեփական ուժերով	- պլանավորողը և որոշում կայացնող մարմիններն ունեն ավելի լավ հնարավորություններ Պ/Ծ-ի մշակման ընթացքում կրկնվող գործընթաց իրականացնելու համար - պլանավորողը և որոշում կայացնող մարմինները հարակից առավելություններ են ստանում Պ/Ծ-ի էությունն ու կայուն զարգացման խնդիրներն ավելի լավ հասկանալու շնորհիվ	- պլանավորողը և որոշում կայացնող մարմինները դժվար թե ՌԷԳ իրականացման փորձ ունենան - ռեսուրսների/ժամանակի առկայության խնդիրներ - անկախ գնահատում (սուբյեկտիվություն) ապահովելու անկարողություն
Խորհրդատուների ուժերով	- ապահովվում է կայուն զարգացման և ՌԷԳ-ի մշակման հարցերում անհրաժեշտ փորձի առկայությունը - ապահովվում են անկախ և նոր տեսակետ և գաղափարներ - բացառվում է սուբյեկտիվության մեղադրանքների ռիսկը	- Խորհրդատուները դժվար թե տեղյակ լինեն տեղական առանձնահատկություններին և պայմաններին - պլանավորողը և որոշում կայացնող մարմինները կրում են ֆինանսական ծախսեր (հատկապես, երբ խորհրդատուն ներգրավվում է պլանավորման և որոշումների ընդունման ողջ ժամանակահատվածի համար) - դժվար է ապահովել ինտեգրման բարձր

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՌԷԳ մշակողի բնորոշ առաջադրանքները

- Համագործակցություն Պ/Ծ կազմողների խմբի հետ շրջանակի սահմանման և առաջնահերթ խնդիրների գնահատման մոտեցումների մշակման (առկա տվյալների և ռեսուրսների օգտագործմամբ) հարցերում
- Գնահատման իրականացման գործընթացի կառավարում և պլանավորման գործընթացում անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում
- Բոլոր կողմերին հետաքրքրող կոնկրետ հարցերի շուրջ խորհրդակցությունների կազմակերպում
- ՌԷԳ հաշվետվության պատրաստում
- Ստացված մեկնաբանություններին պատասխանների պատրաստում, ՌԷԳ եզրակացությունների և որոշում կայացնող մարմինների համար առաջարկությունների հստակեցում

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Տեխնիկական առաջադրանք (ՏԱ) ՌԷԳ փորձագետների համար (1)

1. Ներածություն.

- ՌԷԳ-ը Պ/Ծ-ի մշակման գործընթացին օժանդակելու համար անհրաժեշտ գործիք է
- Պ/Ծ-ի պատրաստման փուլերը, ի՞նչ տեսակի վերլուծություններ են կատարվել (եթե այդպիսիք կան)
- Բացատրել ՌԷԳ-ի իրականացման անհրաժեշտության պատճառները, և թե ինչ որոշումների վրա պետք է ազդեն ՌԷԳ-ի արդյունքներն ու եզրակացությունները

2. ՌԷԳ-ի նպատակներն ու խնդիրները.

- կիրառել և ապահովել ՌԷԳ-ի վերաբերյալ Հայաստանի օրենսդրության պահանջների կատարումը,
- Ներկայացնել առաջարկություններ՝ շրջակա միջավայրի և մարդկանց առողջության հետ կապված հիմնական հարցերն ու նկատառումները Պ/Ծ-ում ներառելու վերաբերյալ,
- Ապահովել ՌԷԳ-ի ընթացքում լիազոր մարմինների և հանրության հետ խորհրդակցությունների/ լսումների անցկացումը

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՏԱ ՌԷԳ փորձագետների համար (2)

3. ՌԷԳ փորձագետների կողմից կատարվելիք հիմնական առաջադրանքները.

- Համապատասխան բնապահպանական խնդիրների վերաբերյալ **առկա տվյալների վերլուծություն,** ներառյալ բնակչության առողջության հետ կապված խնդիրները, Պ/Ծ-ի գնահատում (արդյո՞ք նա հաշվի է առնում բնապահպանական բոլոր կարևոր խնդիրներն ու միտումները, այդ թվում՝ բնակչության առողջության հետ կապված)
- **Պ/Ծ-ի նպատակների վերլուծություն՝** բնապահպանական և բնակչության առողջության հետ կապված նպատակներին դրանց համապատասխանությունը պարզելու համար, որոնք սահմանված են արդեն իսկ ընդունված քաղաքականություններում և Պ/Ծ-ում:
- **ՌԷԳ-ի շրջանակի սահմանման վերաբերյալ հաշվետվության պատրաստում,** ներառյալ այդ հաշվետվության բովանդակությանը վերաբերող օրենքի բոլոր պահանջները, ինչպես նաև տվյալ հաշվետվության վերաբերյալ ստացված առաջարկությունների և դիտողությունների վերլուծության ամփոփիչ աղյուսակի կազմում:
- **ՌԷԳ հաշվետվության առաջին եւ վերջնական տարբերակների պատրաստում,** ներառյալ անհրաժեշտ վերլուծությունը, գնահատումը, մեղմացման միջոցառումները, մոնիթորինգի սխեման
- **Խորհրդատվությունների վերաբերյալ տեղեկանքի (հաշվետվության) եւ հանրային քննարկման մասին տեղեկանքի (հաշվետվության) պատրաստում,** ներառյալ ՌԷԳ հաշվետվության վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների ամփոփ աղյուսակը:

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՏԱ ՌԷԳ փորձագետների համար (3)

4. ՌԷԳ-ի իրականացման մոտեցում.

- **ՌԷԳ գործընթացը կիրականացվի որպես Պ/Ծ-ի մշակման անբաժանելի մաս՝** Պ/Ծ-ի մշակման գործընթացում ՌԷԳ-ի արդյունավետ ներդրումն ապահովելու նպատակով.
- ՌԷԳ մեթոդաբանությունը կճշգրտվի 1-ին փուլում (ՌԷԳ շրջանակի սահմանում)՝ հաշվի առնելով Պատվիրատուի, բնապահպանական գերատեսչությունների, առողջապահական մարմինների, ինչպես նաև հանրության համապատասխան առաջարկները.
- ՌԷԳ-ի ողջ գործընթացի ընթացքում ՌԷԳ հարցերով խորհրդատուների խումբը պետք է համակարգի և համագործակցի Պ/Ծ մշակողների խմբի հետ:

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՏԱ ՌԷԳ փորձագետների համար (4)

5. ՌԷԳ-ի կատարման ժամկետները.

➢ ՌԷԳ գործընթացի ժամկետները պետք է կապված լինեն համապատասխան Պ/Ծ-ի պլանավորման և մշակման գործընթացի հետ:

6. Ի՞նչ ոլորտի մասնագետներ պետք է ներգրավվեն ՌԷԳ-ի իրականացման համար

Քաղաքի զարգացման գլխավոր հատակագծի մշակման օրինակով.

*ՌԷԳ-ի, ԲՍԱԳ-ի և քաղաքաշինության ոլորտում մեծ փորձառություն ունեցող **խմբի ղեկավարը,** որին կաջակցի **կես դրույքով ներգրավված՝** հետևյալ ոլորտները ներկայացնող **խորհրդատուների խումբը.***

- *Ջրահեռացում և թափոնների կառավարում*
- *Հասարակական տրանսպորտ և օդի աղտոտում*
- *Ջրային ռեսուրսներ (մակերևութային և ստորերկրյա ջրերի որակը)*
- *Կենսաբազմազանություն*
- *Առողջապահություն*
- *Սոցիալ-տնտեսական հարցեր և մշակութային ժառանգություն*
- *ԱՏՀ (GIS)*

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՏԱ ՌԷԳ փորձագետների համար (5)

Խորհուրդ է տրվում ՌԷԳ աշխատանքների նախապատրաստումն իրականացնել **երկու փուլով**.

- ՏԱ-ի պատրաստում և ՌԷԳ-ի իրականացման համար խորհրդատուի (կազմակերպության) ընտրության հայտարարում:
  - Նման ՏԱ-ն կարող է լինել հակիրճ բովանդակությամբ, դրանով նախատեսված աշխատանքի ծավալը կներառի ՌԷԳ-ի վերաբերյալ կոնկրետ աշխատանքների շրջանակի սահմանումը
- Մրցույթի արդյունքներով ընտրված խորհրդատուի կողմից ՌԷԳ-ի վերաբերյալ աշխատանքների առավել մանրամասն և ճշտված ցանկի պատրաստում՝ ՌԷԳ-ի շրջանակի սահմանումից և համապատասխան հաշվետվության պատրաստումից հետո:

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՏԱ ՌԷԳ փորձագետների համար (6)

Կարևոր է նախատեսել փոփոխություններ կատարելու հնարավորություն՝

- ***ՌԷԳ-ի վերաբերյալ սահմանված շրջանակում և ցանկում***, *քանի որ ներգրավված խորհրդատուները կարող են նման փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին հիմնավորված եզրակացության հանգել.*
- ***ՌԷԳ-ի ժամկետներում***, *քանի որ ՌԷԳ գործընթացը կարող է, կողմերից անկախ պատճառներով, ի սկզբանե նախատեսվածից ավելի երկար տևել (դա կարող է, օրինակ պայմանավորված լինել որոշակի հետազոտությունների կատարման առանձնահատկություններով, Պ/Ծ-ի մշակման ավելի երկարատև գործընթացով կամ հասարակության մասնակցությամբ):*

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՌԷԳ գործընթացի միկրոկառավարում

Կարևոր է, որ Պատվիրատուի համապատասխան պաշտոնյաները ներգրավված լինեն ՌԷԳ գործընթացում և ապահովեն ընդհանուր համակարգումն ու կառավարումը, մասնավորապես՝

- աջակցություն Պ/Ծ մշակողների և ՌԷԳ խորհրդատուների խմբերի միջև հաղորդակցության և տեղեկատվության փոխանակման գործում,
- պաշտոնական շփումներ բնապահպանական և առողջապահական մարմինների հետ,
- ակտիվ մասնակցություն հանրային քննարկումների միջոցառումներին, օրինակ՝Պ/Ծ-ի հայեցակարգի կամ նախագծի ներկայացում հանրային լսումներում:

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՌԷԳ-ի իրականացման ծախսերը

- ՌԷԳ-ի իրականացումը սովորաբար հանգեցնում է պլանավորման ծախսերի 5 - 10% աճի (ըստ ԵՄ-ի տվյալների)
- Որոշ որակյալ ՌԷԳ-ներ ավելացրել են պլանավորման ծախսերը 5%-ից պակաս
- Ծախսերի չափը կախված է նաև այլընտրանքային տարբերակների ուսումնասիրության քանակից և մանրամասնությունից, հետազոտությունների, մոդելավորման արժեքից և այլն
- Մեծամասամբ ՌԷԳ-ների կատարման համար պահանջվում է մոտավորապես 70-80 մարդ/օր
- Փորձի ձեռքբերմամբ ծախսերը կարող են կրճատվել
- Պ/Ծ-ի մշակման ծախսերի համեմատ՝ այս ծախսերը կարելի է համարել աննշան

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Քննարկման հարցեր

Երեք մոտեցումներից ո՞րն եք համարում նպատակահարմար հենց ձեր Պ/Ծ-ի համատեքստում և ինչու՞:

1. ՌԷԳ-ն իրականացվում է սեփական ուժերով
2. ՌԷԳ-ն իրականացվում է արտաքին փորձագետների կողմից
3. Համակցված մոտեցում

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by
the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Շնորհակալություն ուշադրության համար

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP